ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 142

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 17-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 4-րդ նստաշրջանի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 16 արտահերթ նիստի օրակարգը՝
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, համայնքի կողմից մատուցվող նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 221-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
3) Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի N 128 , 130 և 132 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Կոտաքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 11-ի N 128 -Լ որոշման ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին.
6) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
7) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
8) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
9) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
10) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
11) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի N 140

որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին:
**12) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.**
**13) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 143-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8 - 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականիտեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կողմից մատուցվող 2024 թվականի ընթացքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը արտոնությունները՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սույն որոշման հավելված 1-ի՝ 12-րդ կետի 1-ին ենթակետում կիրառել 1,5 գործակից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՓԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21 -ի N 143-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| 0 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 2024թ. դրույքաչափերը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ | |
| 1) | հիմնական շենքերի և շինությունների համար՝ | |
| ա" | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | 15 000 |
| 2) | սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | |
| ա. | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի ե. պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |
| բ. | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 100 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի ե. պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |

| | | |
|---|---|---|
| գ. | 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 200 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի ե. պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |
| դ. | 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 1 000 000 մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետի ե. պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը: |
| ե. | Շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման համար հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ նպատակով սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող գործակիցները՝<br><br>Գոտի / Գոտիականության գործակից<br>1-4 / 5.0<br>5-8 / 4.0<br>9-12 / 3.0<br>13-16 / 2.0<br>17-20 / 1.0 | |
| 3) | ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ | |
| ա. | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5 000 դրամի և սույն կետի ե. պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը, |
| բ. | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 10 000 դրամի և սույն կետի ե. պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը, |
| 2. | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող ... համար, եթե սահմանված կարգով | |

| | | |
|---|---|---|
| 1) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 3 000 |
| 2) | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով, | |
| 3) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը. | |
| 3. | համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | 5 000 |
| 4. | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |
| 5. | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |
| 6. | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |
| 1) | Յայաստանի Յանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000 |

| | | |
|---|---|---|
| 2) | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000 |
| 3) | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000 |
| 7. | համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 60 000 |
| 1) | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 20 000 |
| 8. | համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 50 000 |
| 9. | օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| 1) | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝<br>1) Համայնքի քաղաքային բնակավայրում<br>2) Համայնքի գյուղական բնակավայրում | 6 000<br>3000 |
| 2) | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 12 000 |
| 3) | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20 000 |

| | | |
|---|---|---|
| 4) | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25 000 |
| 5) | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45 000 |
| 6) | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝<br>1) Համայնքի քաղաքային բնակավայրում<br>2) Համայնքի գյուղական բնակավայրում | 100 000<br>75 000 |
| 10. | օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| 1) | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝<br>1) Համայնքի քաղաքային բնակավայրում<br>2) Համայնքի գյուղական բնակավայրում | 6000<br>3000 |
| 2) | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 12 000 |
| 3) | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20 000 |
| 4) | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25 000 |
| 5) | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45 000 |
| 6) | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝<br>1) Համայնքի քաղաքային բնակավայրում<br>2) Համայնքի գյուղական բնակավայրում | 100 000<br>75 000 |
| 11. | իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ | 350 |
| 12. | համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | |
| 1) | Համայնքի քաղաքային բնակավայրում<br>[illegible] | 50 000 |

| | | |
|---|---|---|
| բ. | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 100 000 |
| գ. | բաղնիքների (սաունաների) համար՝ | 500 000 |
| դ. | խաղատների համար՝ | 1 000 000 |
| ե. | շահումով խաղերի համար՝ | 500 000 |
| զ. | վիճակախաղերի համար՝ | 150 000 |
| 2) | Համայնքի գյուղական բնակավայրում | |
| | առևտրի օբյեկտների համար՝ | 50 000 |
| | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 100 000 |
| | բաղնիքների (սաունաների) համար՝ | 500 000 |
| | խաղատների համար՝ | 1 000 000 |
| | շահումով խաղերի համար՝ | 500 000 |
| | վիճակախաղերի համար՝ | 150 000 |
| 13. | համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| 1) | հիմնական շինությունների ներսում՝ | |
| ա. | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 5 000 |
| բ. | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 10 000 |
| գ. | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15 000 |
| դ. | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 20 000 |
| ե. | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերեսն ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 30 000 |
| զ. | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 50 000 |
| 2) | ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |
| ա. | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1 000 |
| բ. | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2 000 |
| գ. | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 4 000 |
| դ. | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 8 000 |
| ե. | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15 000 |
| զ. | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 25 000 |
| 14. | քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 5 000 |

| | | |
|---|---|---|
| 15. | ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | |
| 1) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2 000 |
| 2) | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 3 500 |
| 3) | սոցիալական գովազդի համար՝ | 0 |
| 4) | այլ արտաքին գովազդի համար՝ | 1 500 |
| 5) | դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ | |
| 6) | եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով | |
| 16. | Ծաղկաձոր համայնքի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000 |
| 17. | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ | 10 000 |
| 18. | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 500 000 |
| 19. | Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | |
| 1) | 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 2 500 000 |
| 2) | 5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 5 000 000 |
| 3) | 7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 7 000 000 |
| 4) | 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 10 000 000 |
| 20. | Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ | [illegible] |

| | | |
|---|---|---|
| | թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ | |
| 21. | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ | |
| 1) | «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ | 20 000 |
| 2) | հեստապարային ակումբի համար՝ օրացույցային տարվա համար՝ | 300 000 |
| 22. | Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար | 10 000 |

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 21 -ի թիվ 143-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | 2024 թվականի դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | |
| 1) | մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 40 000 |
| 2) | 101-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 80 000 |
| 3) | 501-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 160 000 |
| 4) | 1501 քառակուսի մետր և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 250 000 |
| 2. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | 15 000 |
| 3. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը , վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | |
| 1) | մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50 000 |
| 2) | 201-ից մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 150 000 |
| 3) | 301-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 350 000 |
| 4) | 501 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 250 000 |
| | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր մակերեսի համար՝ | 700 000 |
| 4. | 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր մակերեսի համար՝ | 1 500 000 |
| 1) | 3001-ից քառակուսի մետրից ավել մակերեսի համար՝ | 5 000 000 |
| 2) | 1001-5000 քմ. | 5 000 |
| 3) | 5001-10000 քմ. | 10 000 |
| 4) | 10001 և ավելի քմ. | 15 000 |
| 5. | Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ | |
| 1) | մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ | 50 |
| 2) | 501-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ | 20 000 |
| 3) | 1501 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար՝ | 40 000 |
| 6 | Ծաղկաձոր համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվող վճարը՝ | 40 000 |
| 7. | Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք ) կազմելու վճար | |
| 1) | Մինչև 500 քառակուսի մետր մակերեսի համար՝ | 20 000 |
| 2) | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր մակերեսի համար՝ | 100 000 |
| 3) | 1001-ից մինչև 2000 քառակուսի մետր մակերեսի համար՝ | 1 000 000 |

| | | |
|---|---|---|
| 4) | 2001-ից մինչև 3000 քառակուսի մետր մակերեսի համար՝ | 3 000 000 |
| 5) | 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար և՝ | 3 000 000 |
| ա. | 3001 քառակուսի մետրը գերազանցող շենք շինությունների յուրաքանչյուր 1 քառակուսի մետր մակերեսի համար | 1000 |
| 7. | Աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| 1) | Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| ա. | համայնքում անձնագրային հաշվառման կանոններով՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական | 150 |
| բ. | կամ, ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ՝ ամսական՝ | 15 |
| 2) | Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝ | |
| ա. | առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 60 |
| բ. | հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 40 |
| գ. | վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 15 |
| դ. | գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության, զորանոցների համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 8 |
| ե. | արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 15 |
| զ. | շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի ա.-ե. ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի ա.-ե. կետերով սահմանված դրույքաչափով. | |
| է. | շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն կետի ա.-ե. ենթակետերով սահմանված դրույքաչափով: | |
| 8. | Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝<br>1)Համայնքի քաղաքային բնակավայրերում<br>2) Համայնքի գյուղական բնակավայրերում | <br><br><br>100<br>50 |

| | | |
|---|---|---|
| 8.1 | Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին: | |
| 9. | Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| 1) | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում՝ | 3 000 |
| 2) | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում՝ | 10 000 |
| 9. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճարը սահմանել կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ | |
| 1) | յուրաքանչյուր մեկ խորանարդի համար՝ | 600 |
| 2) | մեկ տոննա աղբի համար՝ | 2000 |
| 10. | Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար սահմանվում է տեղական վճար՝ | |
| 1) | յուրաքանչյուր մեկ ժամվա համար | 100 |
| 2) | յուրաքանչյուր մեկ օրվա համար | 300 |
| 3) | մեկ շաբաթվա համար | 1 500 |
| 4) | մեկ ամսվա համար | 5 000 |
| 12. | համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ | 5 000 |
| 13. | Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | |
| | | |

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 143-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| N | Նախադպրոցական կրթության համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը | (դրամ) |
|---|---|---|
| 1) | <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվողների համար՝ ամսական | 3 000 |
| 2) | Նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի երեխաների հաճախելու դեպքում երկրորդ և հաջորդ երեխաների համար՝ ամսեկան | 1 500 |
| 3) | Համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի վճարումից /համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու դեպքում/ ազատվում են՝ | |
| ա. | Միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ երեխաները, | |
| բ . | զոհված զինծառայողների երեխաները, | |
| գ . | հաշմանդրություն ունեցող ծնողների կամ հաշմանդամություն ունեցող երեխաները, | |
| դ. | սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները, | |
| ե. | բազմազավակ /4 և ավելի անչափահաս երեխա ունեցող/ ընտանիքի երեխաները: | |
| 4)" | Արցախից բռնի տեղահանված երեխաներ վարձավճարները զեղչել 100 տոկոսով | |
| 5) | ՆՈՒՀ կրթության համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատումման գումարի դրույքաչափը զեղչել 100 տոկոսի չափով: | |
| ա | Երեխայի առողջական խնդիրների պատճառով չհաճախելու օրերի դիմաց՝ բժշկական տեղեկանքի հիման վրա | |
| բ | Ծնողի դիմումի հիման վրա՝ ծնողներից մեկի արձակուրդի ընթացքում երեխայի ՆՈՒՀ չհաճախելու օրերի դիմաց | |
| | | |

2. ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1) <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը սահմանել ՝

| N | Բաժիններ | Փոխհատուցման գումարի դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|
| ա. | Դաշնամուրի ուսուցում | 2000 |
| բ. | Վոկալի ուսուցում | 2000 |
| գ. | Ժողովրդական գործիքների ուսուցում | Չի փոխհատուցվում |
| դ. | Պարարվեստի ուսուցում | 2 000 |
| ե. | Կերպարվեստի ուսուցում | 1000 |
| զ. | Դիզայներության, կար ու ձևի ուսուցում | 1000 |

2) Նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի երեխաների հաճախելու և (կամ)նույն երեխայի՝ մեկից ավելի խմբակներ հաճախելու դեպքում գանձման ենթակա վճարները զեղչվում են 50 տոկոսի չափով:

3) Ծաղկաձոր համայնքում հաշվառում չունեցող երեխաների խմբակներ հաճախելու դեպքում սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 1.5 գործակից:

4) Համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի վճարումից /համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու դեպքում/ ազատվում են՝

ա. Միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ երեխաները,

բ. զոհված զինծառայողների երեխաները,

գ. հաշմանդրություն ունեցող ծնողների կամ հաշմանդամություն ունեցող երեխաները,

դ. սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները,

ե. բազմազավակ /4 և ավելի անչափահաս երեխա ունեցող/ ընտանիքի երեխաները"

5) Արցախից բռնի տեղահանված երեխաներ վարձավճարները զեչվում 100 տոկոսի չափով:

3. <<Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարների դրույքաչափը՝ 2024 թվականի համար սահմանել 0 դրամ:

4. <<Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարների դրույքաչափը՝ 2024 թվականի համար սահմանել 0 դրամ:

5. <<Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարների դրույքաչափը՝ 2024 թվականի համար սահմանել 0 դրամ:

6. <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարների դրույքաչափը՝ 2024 թվականի համար սահմանել 0 դրամ:

7. Ծաղկաձոր համայնքում հաշվառում չունեցող երեխայի Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախելու դեպքում մեկ երեխայի համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարների դրույքաչափը՝ 2024 թվականի համար սահմանել 5000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

---

**21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 144-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 221-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի <<Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 221-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Տող 1261 - Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) <<293814.5>> թիվը փոխարինել <<519686.1>> թվով:

2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<4215>> (Ապահովագրական ծախսեր ) <<200.0>> թիվը փոխարինել <<215.0>> թվով:

3) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված <<4261>> (Գրասենյակային նյութեր ) <<1700.0>> թիվը փոխարինել <<1710.0>> թվով:

4) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված <<5113>> (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում ) <<639862.8>> թիվը փոխարինել <<666096.9 >> թվով:

5) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված <<4215>> (Ապահովագրական ծախսեր ) <<300.0>> թիվը փոխարինել <<800.0>> թվով:

6) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված <<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<400 000.0>> թիվը փոխարինել <<599637.5 >> թվով:

7) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված <<4239>> (Ապահովագրական ծախսեր ) <<5000.0>> թիվը փոխարինել <<4475.0>> թվով:

8) Բաժին 10 խումբ 7 դաս 1 (Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված <<4727>> (Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) <<4200.0>> թիվը փոխարինել <<3400.0>> թվով:

9) Բաժին 10 խումբ 7 դաս 1 (Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված <<4729>> (Այլ նպաստներ բյուջեից) <<6000.0>> թիվը փոխարինել <<6800.0>> թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՓԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 145**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ հավելված 1:
2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել <<Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ հավելված 2:
3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել <<Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ հավելված 3:
4. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հավելված 1**
Ծաղկաձոր համայնքի ավագանու 21.12.2023
թվականի թիվ 145 որոշման

*Ծաղկաձորի համայնքապետարան*
կազմակերպության անվանումը

Հաստատում եմ համայնքի ղեկավար Ն. Հարությունյան
պաշտոնը ստորագրությունը անուն ազգանունը

# ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՀԱՆՁՆՄԱՆ

ԱԿՏ N 20 «21» դեկտեմբերի 2023 թ.

Ստացող *<<Ծաղկաձորի կոմունալ տնտեսության >> ՀՈԱԿ*
կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

Հիմքը *21.12.2023թ Ծաղկաձոր համայքի ավագանու թիվ 145 որոշում*
որոշումը, հրամանը, պայմանագիրը և այլն

| h/h | Հիմնական միջոցի անվանումը, համառոտ բնութագիրը | Գույքային համարը | Հիմնական միջոցի | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | համախառն հաշվեկշռային արժեքը | կուտակված մաշվածությունը | Հաշվեկշռային արժեքը | |
| 1 | 2 | | | 3 | 4 | 5 |
| 1. | Համակցված ճանապարհային մեքենա МД-43118 | 01547 | 48,000,000.00 | 103,225.81 | 47,896,774.19 | |

« » 20 թ. N լիազորագրի համաձայն՝ տրված
ում, ում կողմից (պաշտոնը, անունը, ազգանունը, կազմակերպությունը)

Հանձնող
կ.տ.

Ղեկավար՝ Ռ. Եղիազարյան
ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Խաչատրյան
ստորագրությունը անունը, ազգանունը

Ստացող
կ.տ.

Տնօրեն Է. Հովհաննիսյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Մ. Սաղոյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Հավելված 2

Ծաղկաձոր համայնքի ավագանու
21.12.2023թվականի թիվ 145 որոշման

Ծաղկաձորի համայնքապետարան
կազմակերպության անվանումը

Հաստատում եմ համայնքի ղեկավար______________ Հարությունյան
պաշտոնը ստորագրությունը անուն ազգանունը

# ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ

ԱԿՏ N 21 «21» դեկտեմբերի 2023 թ.

Ստացող <<Աղավնաձոր գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ
կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

Հիմքը *21.12.2023թ Ծաղկաձոր համայնքի ավագանու թիվ 145 որոշում*
որոշումը, հրամանը, պայմանագիրը և այլն

| հ/հ | Հիմնական միջոցի անվանումը, համառոտ բնութագիրը | Գույքային համարը | Հիմնական միջոցի | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | համախառն հաշվեկշռային արժեքը | կուտակված մաշվածություն | Հաշվեկշռային արժեքը | |
| 1 | 2 | | | 3 | 4 | 5 |
| 1. | Մարմնամարզական պատ | 01524 | 58,800.00 | 197.58 | 58,602.42 | |
| 2. | Մարմնամարզական պատ | 01525 | 58,800.00 | 197.58 | 58,602.42 | |
| 3. | Մարմնամարզական ներքնակ | 01526 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 4. | Մարմնամարզական ներքնակ | 01527 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 5. | Մարմնամարզական ներքնակ | 01528 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 6. | Մարմնամարզական ներքնակ | 01529 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 7. | Մարմնամարզական ներքնակ | 01530 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 8. | Մարմնամարզական ներքնակ | 01531 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 9. | Մարմնամարզական ներքնակ | 01532 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 10. | Մարմնամարզական ներքնակ | 01533 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 11. | Մարմնամարզական ներքնակ | 01534 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 12. | Մարմնամարզական ներքնակ | 01535 | 19,920.00 | 66.94 | 19,853.06 | |
| 13. | Եռանիվ հեծանիվ | 01536 | 24,000.00 | 80.65 | 23,919.35 | |
| 14. | Եռանիվ հեծանիվ | 01537 | 24,000.00 | 80.65 | 23,919.35 | |
| 15. | Մարմնամարզական նստարան | 01549 | 45,000.00 | 12.10 | 44,987.90 | |
| 16. | Մարմնամարզական նստարան | 01550 | 45,000.00 | 12.10 | 44,987.90 | |

« » ______ 20 թ. N ______ լիազորագրի համաձայն՝ տրված ______
ում, ում կողմից (պաշտոնը, անունը, ազգանունը, կազմակերպությունը)

Հանձնող
կ.տ.

Ղեկավար՝ ______ Ո. Եղիազարյան
ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ՝ ______ Ն. Խաչատրյան
ստորագրությունը անունը, ազգանունը

Ստացող
կ.տ.

Տնօրեն ______ Գ. Մանուկյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______ Ա. Միքաելյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Հավելված 3

Ծաղկաձոր համայնքի ավագանու 21.12.20
թվականի թիվ 145 որոշման

Ծաղկաձորի համայնքապետարան
կազմակերպության անվանումը

Հաստատում եմ համայնքի ղեկավար ______ Ն. Հարությունյան
պաշտոնը ստորագրությունը անուն ազգանունը

# ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ

## ԱԿՏ N 21

«21» դեկտեմբերի 2023 թ.

Ստացող *<<Արտավազ գյուղի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ*
կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

Հիմքը *21.12.2023թ Ծաղկաձոր համայնքի ավագանու թիվ 145 որոշում*
որոշումը, հրամանը, պայմանագիրը և այլն

| h/h | Հիմնական միջոցի անվանումը, համառոտ բնութագիրը | Գույքային համարը | Հիմնական միջոցի | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | համախառն հաշվեկշռային արժեքը | կուտակված մաշվածություն | Հաշվեկշռային արժեքը | |
| 1 | 2 | | | 3 | 4 | 5 |
| 1. | Մարմնամարզության գորգ | 01538 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 2. | Մարմնամարզության գորգ | 01539 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 3. | Մարմնամարզության գորգ | 01540 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 4. | Մարմնամարզության գորգ | 01541 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 5. | Մարմնամարզության գորգ | 01542 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 6. | Մարմնամարզության գորգ | 01543 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 7. | Մարմնամարզության գորգ | 01544 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 8. | Մարմնամարզության գորգ | 01545 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |
| 9. | Մարմնամարզության գորգ | 01546 | 39,600.00 | 133.06 | 39,466.94 | |

« » ______ 20 թ. N ______ լիազորագրի համաձայն՝ տրված ______
ում, ում կողմից (պաշտոնը, անունը, ազգանունը, կազմակերպությունը)

Հանձնող
կ.տ.

Ղեկավար՝ ______ Ռ. Եղիազարյան
ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ՝ ______ Ն. Խաչատրյան
ստորագրությունը անունը, ազգանունը

Ստացող
կ.տ.

Տնօրեն ______ Ն. Ղազարյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______ Մ. Սուքիասյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 146**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 128, 130 ԵՎ 132 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի <<Ծաղկաձոր համայնքի <<Արծափ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> N 128 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1 :
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի <<Ծաղկաձոր համայնքի <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> N 130 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի <<Ծաղկաձոր համայնքի << Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 132 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 01-ից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 132 որոշման Փոփոխությունները Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21 -ի թիվ 146 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԾԱՓ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների քանակը՝ 17

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | |
| 1 | <<ԱՐԾԱՓ>> ՀՈԱԿ | Տնօրեն | | 1 | 350,000 | | | 350,000 |
| 2 | | Տնօրենի օգնական | | 1 | 180,000 | | | 180,000 |
| 3 | | Աշխղեկ | | 1 | 180,000 | | | 180,000 |
| 4 | | Հաշվապահ | | 1 | 170,000 | | | 170,000 |
| 5 | | մեխանիզատոր-տրակտորիստ | | 1 | 210,000 | | | 210,000 |
| 6 | | Ջրամատակարարման բանվոր | Տեխնիկական սպասարկման | 1 | 170,000 | | | 170,000 |
| 7 | | Ջրամատակարարման բանվոր | Տեխնիկական սպասարկման | 1 | 150,000 | | | 150,000 |
| 8 | | Փականագործ | Տեխնիկական սպասարկման | 2 | 150,000 | | | 300,000 |
| 9 | | Ջրակարգավորող փականագործ | Տեխնիկական սպասարկման | 1 | 190,000 | | | 190,000 |
| 10 | | Աղբահանության վարորդ | Տեխնիկական սպասարկման | 2 | 180,000 | | | 360,000 |
| 11 | | Աղբահանության վարորդ | Տեխնիկական սպասարկման | 1 | 170,000 | | | 170,000 |
| 12 | | Աղբահանության բանվոր | Տեխնիկական սպասարկման | 1 | 190,000 | | | 190,000 |
| | | Էլեկտրիկ | Տեխնիկական սպասարկման | 0.5 | 180,000 | | | 90,000 |
| 13 | | Աղավնաձոր գյուղի հանդիսությունների սրահի պատասխանատու | | 0.5 | 180,000 | | | 90,000 |
| 14 | | Մարմարիկ գյուղի հանդիսությունների սրահի պատասխանատու | | 0.5 | 180,000 | | | 90,000 |
| 15 | | Արտավազ և Փյունիկ գյուղերի հանդիսությունների սրահների պատասխանատու | | 0.5 | 180,000 | | | 90,000 |
| | | **Ընդամենը** | | **16.0** | | | | **2,980,000** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2

Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի
դեկտեմբերի 01-ի թիվ 132 որոշման Փոփոխությունները
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի
դեկտեմբերի 21 -ի թիվ 146 որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 13

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | "Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց" ՀՈԱԿ | Տնօրեն | | - | 1 | 150,000 | | | 150,000 |
| 2 | | Տեսական առարկաների ուսուցիչ | | | 2 | 125,000 | | | 250,000 |
| 3 | | Գլխավոր հաշվապահ | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| 4 | | Դաշնամուրի ուսուցիչ | | | 2 | 125,000 | | | 250,000 |
| 5 | | Կերպարվեստի ուսուցիչ | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| | | Կիթառի ուսուցիչ | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| | | Թատերականի ուսուցիչ | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| 6 | | Պարի խմբավար | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| 7 | | Մոդելավորման, դիզայնի ուսուցիչ | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| 8 | | Վոկալի ուսուցիչ | | | 2 | 125,000 | | | 250,000 |
| 9 | | Շվի-դուդուկի ուսուցիչ | | | 1 | 125,000 | | | 125,000 |
| 10 | | Հավաքարար | | | 1 | 120,000 | | | 120,000 |
| 11 | | Տնտեսվար | | | 0.5 | 125,000 | | | 62,500 |
| | | Ընդամենը | | | 15.50 | | | | 1,957,500 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3

Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի
դեկտեմբերի 01-ի թիվ 132 որոշման Փոփոխությունները
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի
դեկտեմբերի 21 -ի թիվ 146 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների քանակը՝ 14

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՆՈՒՀ ՀՈԱԿ | Տնօրեն | | 1 | 160,000 | | | 160,000 |
| 2 | | Մեթոդիստ ու գծով տնօրենի տեղակալ | | 0.25 | 135,000 | | | 33,750 |
| 3 | | Հաշվապահ | | 0.5 | 135,000 | | | 67,500 |
| 4 | | Դաստիարակ | | 1.17 | 135,000 | | | 157,950 |
| 5 | | Դաստիարակի օգնական | | 1 | 135,000 | | | 135,000 |
| 6 | | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | | 0.25 | 135,000 | | | 33,750 |
| 7 | | Երաժշտության դաստիարակ | | 0.25 | 135,000 | | | 33,750 |
| 8 | | Պարուսույց | | 0.25 | 135,000 | | | 33,750 |
| 9 | | Բուժքույր | | 1 | 135,000 | | | 135,000 |
| 10 | | Տնտեսվար | | 0.25 | 135,000 | | | 33,750 |
| 11 | | Խոհարար | | 1 | 135,000 | | | 135,000 |
| 12 | | Խոհարարի օգնական | | 0.5 | 135,000 | | | 67,500 |
| 13 | | Օժանդակ բանվոր | | 0.25 | 135,000 | | | 33,750 |
| 14 | | Հավաքարար | | 0.5 | 135,000 | | | 67,500 |
| 15 | | Հնոցապան | | 0.5 | 135,000 | | | 67,500 |
| | | **Ընդամենը** | | **8.67** | | | | **1,195,450** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 147-Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N 128-Լ ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 11-ի << Ծաղկաձոր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին>> N 128 որոշման:

2. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 21 -ի
N 147-Լ որոշման

# ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Ծաղկաձոր համայնքում (այսուհետ՝ համայնք), սոցիալական աջակցության ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, ծառայություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչները, դրանց համապատասխան գնահատման միավորները և ընտանիքի գնահատման թերթիկի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանուց՝ մինչև հինգ անդամ,
3) սոցիալական աշխատողներից՝ մինչև չորս անդամ,
4) համայնքապետարանի աշխատակազմից՝ մինչև երեք անդամ,
5) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ մինչև երեք անդամ,
6)համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ մինչև յոթ անդամ,
7) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներից՝ մինչև վեց անդամ
8) համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ մինչև չորս անդամ:

4. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

5. Սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովը կարող է ունենալ ենթահանձնաժողովներ՝ այդ թվում սոցիալական աջակցության տրմադրման: Ենթահանձնաժողովում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանուց՝ մինչև հինգ անդամ.
2) սոցիալական աշխատողներից՝ մեկ անդամ.
3) համայնքապետարանի աշխատակազմից՝ մինչև երկու անդամ.
4) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ մեկ անդամ.
5) համայնքում գործող հասարակական կազմակերպություններից՝ մինչև երեք անդամ.
6) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցներից՝ մինչև երկու անդամ.
7) համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ մեկ անդամ:

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում, Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

8. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

9. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից (1) մեկ տարի ժամկետով:

10. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողի բացակայության դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկված համայնքապետարանի աշխատակիցներից մեկը):

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

12. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

13. Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ և կազմված եզրակացությունները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

14. Հանձնաժողովի գործունեությունը ուղղված է ընտանիքների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը, աջակցմանը, ռիսկերի կառավարմանը՝ դրանց կարգավորման ու նվազեցմանը: Հանձնաժողովը, համախմբելով տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տարածքային կառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ մատուցողներին, սոցիալական ծառայություններից օգտվողներին, քաղաքացիական հասարակության դերակատարներին, աջակցում է համայնքի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական ներառմանն ուղղված մասնակցային գործընթացներին:

15. Հանձնաժողովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են՝

1) համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացին.
2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը, առաջարկությունների ներկայացմանը, համայնքում սոցիալական աջակցության տրամադրման բարենպաստ միջավայրի ստեղծմանը.
3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն ուղղված ծառայությունների մշակմանը, կարգավորմանը.
4) մասնակցել թիրախ բնակավայրերում կարիքների գնահատման մեթոդաբանության քննարկմանը, մշակմանը, օժանդակել կարիքների գնահատման համար տեղեկատվության փոխանակմանը (խնդիրների) ռիսկերի բացահայտմանը, ուղղորդմանը.
5) մասնակցել համայնքային հանդիպումներին, քննարկումներին, տեղեկատվական միջոցառումներին.
6) նպաստել սոցիալական նշանակության ծրագրերի հասանելիության, հասցեականության և տեսանելիության բարձրացմանը.

7) աջակցել տեղական սոցիալական ծրագրերի կանոնավոր և պարբերական մոնիտորինգներին.

8) նպաստել համայնքում մատուցվող սոցիալական աջակցության ծառայությունների կայունությանը, այդ թվում՝ ցուցաբերել աջակցություն հավաստագրման գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը.

9) օժանդակել մշակված տեղական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտման աշխատանքներին.

10) մասնակցել և (կամ) ցուցաբերել խորհրդատվական աջակցություն համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորմանն ու մատուցմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատման և ընտրության գործընթացներին:

## III. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,

2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:

17. Դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ, հետևյալ եղանակով.

1) անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝

2) փոստով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝

3) էլեկտրոնային՝ դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը:

18. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).

3) բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի որոշման պատճենը,

4) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում) .

5) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).

6) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս, առանց ծնողական խնամքի մնալու և այլ).

7) փոստային եղամակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի պատճենները.

8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

19. Դիմումները համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 2 (երկու) շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

20. Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին տրվում է համապատասխան ընթացք անհրաժեշտության դեպքում կատարում է տունայց, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում:

21. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

22. Հանձնաժողովի տված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում: Հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում դիմումատուն գրավոր տեղեկացվում է:

23. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

24. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## IV. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

25.Դիմումի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի որոշմամբ այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը:

26. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

27. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տնայց կատարելուց հետո աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

28. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

29. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

30. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար: 31. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

31. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի և հանձնաժողովի երկու անդամի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

## V. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

32. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
2) միայնակ մայր - 1 միավոր,
3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
4) բազմազավակ՝

ա. չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք -1 միավոր,
բ. վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք – 2 միավոր,

5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք 2 միավոր,
6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք- 2 միավոր
7) հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք -2 միավոր

8) տնակ կացարանում կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր

9) վարձով բնակվող ընտանիք - 1 միավոր

10) դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր

11) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք- 2 միավոր,

12) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) ունեցող ընտանիք-3 միավոր

13) հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող ընտանիք – 2 միավոր

14) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր

15) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք-2 միավոր.

16) կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք-3

17) մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք -2 միավոր

18) առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք-3 միավոր

19)խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք -3 միավոր

20) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն ) ընտանիք-4

21) անբարենպաստ այլ պայմաններ- 1-ից 4 միավոր (հիմնավորում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով)

33. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 4 միավոր ստանալու դեպքում:

34.Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում հաշվառված, մշտապես բնակվող համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

## VI. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

35. Աջակցություն տրամադրելու փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումը կամ գրությունը.

2) դիմողի և (կամ) նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի և (կամ) նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.

4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

5) հանձնաժողովի եզրակացությունը.

6)սոցիալական աշխատողի կամ գործը վարող համայնքային ծառայողի հատուկ եզրակացությունը.

7) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

8) աջակցությունը դիմողին տրամադրելու փաստը հավաստող փաստաթուղթ:

36. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ (սոցիալական գործ) և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

37. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքի աշխատակազմի կնիքով:

38. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:

Ձև 1

## ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնք

«---»-------------20——թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն ----------------------------------------

Հասցե----------------------------------------

Հեռախոս----------------------------------------

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

| Անուն, ազգանուն, հայրանուն | Կարգավիճակ | Ծննդյան օր, ամիս, տարի |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

Ընտանիքի իրավիճակը

| Իրավիճակ | Նկարագիր |
|---|---|

| | |
|---|---|
| Բնակարանային պայմաններ | |
| Կոմունալ-կենցաղային և սանիտարա-հիգիենիկ պայմաններ | |
| Աշխատանքով ապահովվածություն | |
| Եկամուտներ | |
| Հագուստով ապահովվածություն | |
| Սննդով ապահովվածություն | |
| Առողջապահական կարիքներ | |
| Այլ | |

**Ընտանիքի սոցիալական կապերը**

| Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք | |
|---|---|
| տվյալներ | կարգավիճակ |
| | |
| | |

**Լրացուցիչ տեղեկատվություն**

---------------------------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------------------------

**Մասնագետի դիտարկումներ**

-----------------------------------------------------------------------------------------------

-------------------------------------------------------------------------------------

**Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)**

□

Աշխատանքային խմբի անդամների տորագրությունները

**Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ**

| N | Չափորոշիչը | Չափորոշիչի համար սահմանված միավորը | Ընտանիքի ստացած միավորը |
|---|---|---|---|
| 1 | Նպաստառու ընտանիք | 1 | |
| 2 | Միայնակ մայր | 1 | |
| 3 | Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա | 1 | |
| 4 | Բազմազավակ՝<br>չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք<br>վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող) ընտանիք | 1<br><br>2 | |
| 5 | Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |
| 6 | 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք | 2 | |
| 7 | Հաշմանդամ երեխաի ընտանիք | 2 | |
| 8 | Տնակ կացարանու կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք | 2 | |
| 9 | Վարձով բնակվող ընտանիք | 1 | |
| 10 | Դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետից տուժած) ընտանիք | 3 | |
| 11 | Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի ան<br><br>դամի մահվան դեպք | 2 | |
| 12 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) անձի ընտանիք | 3 | |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք | 2 | |
| 14 | Միայնակ չաշխատող թոշակառու | 2 | |
| 15 | Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք | 2 | |
| 16 | Կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք | 3 | |
| 17 | Մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք՝ | 2 | |
| 18 | Երկողմանի ծնողազուրկի (ԱԾԽՄ) երեխա ունեցող ընտանիք | 3 | |
| 19 | Խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք | 3 | |
| 20 | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ( անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն և այլն) անձի ընտանիք | 4 | |
| 21 | Այլ անբարենպաստ պայմաններ | 1-4 | |
| | Ընդամենը | | |
| | | | |

Աշխատանքային խմբի անդամների ստորագրությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 148

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածը**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր , գյուղ Արտավազ 1-ին փողոց թիվ 9 հասցեում գտնվող, 0.06000 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման /ծածկագիր՝07-017-0017-0014/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:**
**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 149

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր , գյուղ Արտավազ վարչական տարածքում գտնվող, 0.20585հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը /ծածկագիր՝ 07-017-0144-0002/ ճանաչել համայնքային սեփականություն:**
**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 150

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023թվականի դեկտեմբերի 11-ի N 1/փ-451 եզրակացությունը և Ռամելա Հակոբյանի դիմումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1. Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի վարչական տարածքում գտնվող, Ռամելա Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Անտառային 2-րդ թաղամաս 4/15 հասցեում 07-005-0026-0901 կադաստրային ծածկագրով և 0,5948 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:**

2. Սույն ոշոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 151

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023թվականի նոյեմբերի 30-ի N 1/փ-419 եզրակացությունը և <<Ալվինա հյուրանոցային համալիր>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի դիմումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրակետոության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Գլխավոր մարզահամալիր թաղամաս թիվ 19 հասցեում գտնվող <<Ալվինա հյուրանոցային համալիր>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 07-005-0026-0884 կադաստրային ծածկագրով, 1.9059 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 152

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Ավետիք Իսահակյան փողոց, 7/1 հասցեում գտնվող, 0.01042 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման /կադաստրային ծածկագիր 07-005-0021-0047/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 153

### ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 140 ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի << Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.>> թիվ 140 որոշումը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 154**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդհոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդհոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականիմայիսի 26-ի թիվ 550-Նորոշման 1-ին կետի 1-ին, 4-րդ և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Արմեն Ռուբենի Խուդաշյանի լիազորված անձ՝ Փառանձեմ Գևորգի Փահլևանյանի դիմումը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արմեն Ռուբենի Խուդաշյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 64 հողամաս հասցեում գտնվող 0,06 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0022-0027/ մակերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 64/1 հողամաս հասցեում գտնվող 0,052 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 5 467 176 ( հինգ միլիոն չորս հարյուր վաթսուն յոթ հազար մեկ հարյուր յոթանասուն վեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

| Կողմ -4 | Դեմ -6 |
|---|---|
| ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ | ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ | ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ | ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ |
| | ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ |
| | ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ |

Ձեռնպահ -2

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 դեկտեմբեր 2023 թվականի թիվ 155

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 4-րդ և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Անահիտ Սահակյանի ՝ դիմումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Անահիտ Սահակյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 3 նրբանցք , թիվ 39 հասցեում գտնվող 0,288 հա / կադաստրային ծածկագիր՝ 07-005- 0016-0124/ մակերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս , 39/1 հողամաս հասցեում գտնվող 0,0086 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ բնակավայրերի, բնակելի այլ հողեր հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 904187 (ինը հարյուր չորս հազար մեկ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասի օտարումը իրականացնել՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**